



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11572

ԱՌԱՋԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԸ

Թարգմ. Գ. [redacted]

891.71
L-67

№ 26

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1925

71072

25 SEP 2006

NOV 2010



այ.

1001
8824

Մեքենագործարանում ոռճիկ եյին բաժանում:

Դեպի դաշար նայող պատուհանից վիթխարի հրդեհի պես առնի լույսը ներս եր թափվել: Փոկանիվները, փոկերը և դաղգյահները բոցերի տակ սևին եյին տալիս, իսկ դեպի զանձապահը շարքերով շարժվող բանվորների դեմքերը շարունակ փոփոխվում եյին: Ստացողները խճճվել եյին դրամի վոսկեհյուս ցանցի մեջ, շուրջանակի վագում եյին ձուլիչների, մեքենաների մոտով ու բաց դռնակի շեփքից յեղնելով, կորչում եյին իրիկվա կապույտ մթնշաղի մեջ:

Բակում՝ ժանգոտած ատամնավոր անիվի վրա նստած եր ջլուտ, բարեհոգի դեմքով Պարամոնը:

— Շեստերնի վրա թո՛ւխ ես նստել, ի՞նչ ե, հարցնում եյին նրան:

— Չէ, յես հով չեմ,— թավ ձայնով պատասխանում եր նա,— պարտքերն եմ հավաքում:

— Պահո՞ հարստացել ես:

— Յե՛ս, յես միշտ ել հարուստ եմ յեղել:

Մեկ-մեկ Պարամոնին մտտենում էյին բան-վորները, բուռը դրամ գնում, սուսիկ-փուսիկ աչքով անում ու դեպի դուռն էյին շտապում:

Նա աչքերը կկոցում եր ու դրամները կողքի գրպանը գցում, վորոնք ախտեղ զիպչելով պողպատե մետրին, և պոպոռն փոքերը դուրս գցած ներչափին (ВЫТРОМЕТР)՝ գնում էյին:

Ստացած դրամների վրա ավելացնելով նոր ստացած տաս կոպեկանոցը, ասում եր. «Ես ել մեկ ուրբի տաս»: Յե՛վ անտեսորեն մտածում եր. «Մի՛խ, յեթե վողջ արհեստանոցը հասկանար... Չորս հարյուր մարդ... Սատանային ել կարելի յե մարդ դարձնել»:

Նա հավաքեց յերեք ուրբի տասը կոպեկ ու ամենից վերջը դուրս յեկավ փողոց: Խոնավ, տափակելու աստիճան կոխկրտված գարնային ճանապարհը դրմբդրմբում եր:

Առևտուր անող կանայք լիբը զամբյուղներն առած՝ հագիվ էյին քայլում: Խանութներում ազմուկ եր տիրում, իսկ գարեջրատներում հարմոնն եր հնչում:

Մի կին անկյունում կանգնած ոռճիկի զըլուխն եր լալիս:

Շլկվեց անպիտանը, ցանկապատով անցավ, մինչև լույս բալորի գլխին քար կգցի:

II

Վաղորդյան զանգերի զողանջի տակ Պարամոնը շուկա յեր գնում: Խանութները հենց նոր էյին բացվել ու վաճառականները քնաթաթախ ճայնով կանչում էյին.

— Եստեղ համեցեք, եստեղ համեցեք, ինչ ուզեք կա՛ համ շապկացու, համ շապիկ, համ բլուզացու, համ բլուզ:

— Քրոջս համար կոֆտացու յե պետք:

— Ինչքան ուզես... Արի՛-արի՛, մի սֆիթա տուր տենանք... Ը-հր՛...

— Չե, սրանից չե, ըույրս կարմիրն ա սիրում:

— Կարմիրը: Կարելի յե. համեցեք... Դարակներից դախի վրա թափվեցին մուգ, կարմիր, վարդագույն, պուտավոր, գուլավոր ու ծաղկավոր թոփերը: Վո՛չ մեկն ել դուր չեկավ: Պարամոնը խանութից նկատեց անցնող չարչու կողովում ալ կարմիր կտոր ու վազեց դեպի նա:

— Սպասիր բիճա, եդ ի՛նչ ես ծախում:

— Գլխի աղլուխ:

Գույնը հրաշալի յեր, իսկ յերբ աղլուխը բացին, ասես ծաղիկներ էյին ծաղկում:

— Ափսո՛ս... Բա սրանից առանց ծաղիկների չունես, — հարցրեց Պարամոնը:

— Առանց ծաղիկների: Կնկա համար ինչ

լազաթ, վոր աղլուխը ծաղիկներ չունենա: Հլա մի տես, տես, կասես իսկական ծաղիկներ ըլին:

— Հա, դե, իմ կնիկն ուրիշ կնիկ ա, նըրան պարզ, սաղա կտորը ձեռք կտա:

— Սաղեն ել կա... Ա, սպիտակը:

— Սիպտակ... Սիպտակը փեշքաշ ել տաաչեմ տանի: Վաճառականներն իրենց գողին եյին տալիս ու համոզում, իսկ Պարամոնը ծիծաղից թուլացել եր. ախմախներ: Նա շոշափեց մետաքսն ու ձեռքը յետ քաշելով ասաց՝ կրկծի... Զոկեց, շոկշկեց ու վերջը բաց կարմիր սատինը հավանեց:

Շոշափեց, սակարգեց ու ասաց.

— Հինգ արշին կտրի:

— Հինգ արշին,— զարմացավ վաճառականը. ի՞նչ եք ասում. թե յերկու կոֆտայի համար ե, վեց արշին ե հարկավոր, յերկու շապիկի համար՝ ութը, իսկ դուք հինգ արշին եք ուզում: Մի, կամ յերեք արշին ել պետք ե ավելացնել... Թե չե սրանից դուրս չի գա:

— Դուրս կգա, դուրս կգա. մեր տանը դուրս են բերում: Կտրի:

Դանդաղությամբ ու սիրով ընտրեց վոսկե և արծաթե բուզմենտները: Դուան մոտ՝ գլանների մեջ ներկեր տեսավ, ուրախացավ՝ «կը նախ-

չենք», մտածեց: Բայց յերբ իմացավ, վոր բոլոր ներկերը միանգամից են ծախում՝ ասաց.

— Լավ ե, թե վոր մարդի ուժը պատի:

III

Աղջիկների խումբը գլանակներ փաթաթող Աննուշկայի մոտ եր: Պարամոնն առիթ ունեցավ բոլորի հետ ծանոթանալու, ուրախանալու և թեյ խմելու: Զանձրույթ եր տիրում: Խոսքի տուտը գցեց ու կանգ առավ են բանի վրա, թե ինչպես մի քաղաքում՝ գործարանում գլանակ ծախող կանանց գործադուլի համար բժշկական քննության են յենթարկել ու դեղին տոմսեր տվել: Չսազեց: Աննուշկան աչքերը կկոցեց ու շրթունքները ծովոցեց.

— Զուր տեղը նեղություն մի քաշիր, նըրանց խելքի բերողը դու չես:

— Դեհ ինչո՞ւ յեք նստել, գոնե մի բան յերգեցեք:

Աղջիկները քրտմնշացին ու շտապեցին.

— Գնանք, Աննուշկա...

— Եդ չեղա՛յլ,— ընդհատեց Պարամոնը,— յես հենց սպասում եյի, վոր դուք գնայիք: Աննուշկի հետ կարևոր գործ ունեմ... Աղջիկները նայեցին միմյանց յերեսի ու գնացին:

— Հիմա քեզ իմ սիրողի տեղը կդնեն,— ասաց Աննուշկան ու մտերմորեն հարցրեց.

— Ի՞նչ կա ձեզանում:

— Մեզանում վոչինչ: Իսկ ձեզանում ի՞նչ կա:

— Նսւյնն ե: Հարմար ընկերուհիներ եմ ձարել, ուզում եյի նրանց հետ մի քիչ ժամանց անել: Կարծում եմ, վոր մինչև ամառը ելի կհավաքվենք:

— Աշխատիր, աշխատիր, իսկ յես մի փոքր գործով կգամ քո և Սերաֆիմայի մոտ...

— Ափսոս, վոր յես չեմ կարողանում: Այ թե կշինեյի հա:

— Հլա մի տես:

Պարամոնը կապոցը բաց արեց, սատինը հարթեց ու բուզմենտները դրեց վրան:

— Պահ, պահ, գիտե՞ս թե ինչ ե լինելու:

Ահա: Յերկու հատ պատրաստեցեք: Բան ե, թե մեկը թոցնեն, մյուսը դուրս կհանենք: Գեղեցիկ լինելու մասին ել ինքներդ մտածեք... Մի խոսքով, դրանից կարեցեք:

Պարամոնը գլխարկի կալենկորի արանքից մի գրած թուղթ հանեց.

— Տես, վոր մեջ տեղը լինի... Ծայրերը պետք ե ծալել ու յերեք կողմից յերկվական ժապավեն կարել: Դու լավ իմացիր, վոր ես առաջինն ե լինելու: Եստեղ եսպես բան հլա չի յեղել... Աշխատեցեք ենպես անել, վոր աչք

բռնացնի... Դեհ, պահիր: Ընկերուհիներդ հետ շատախոսեցի: Գնա, գնա, նրանք արդեն հավաքվել են:

IV

Քաղաքը մնաց աղյուսի գործարանի յետը, նորից դուրս թռավ ու փայլող յեկեղեցիներէ հետ թագնվեց բլուրների յետը: Պարտիզում՝ անցյալ տարվա չորացած բույսերը վոտքերի տակ ճոճում ու խշխշում եյին, նոր ծիլերը կանաչին եյին տալիս: Պարամոնը ձեռքերը թափ տրվեց ու մտածեց, թե տղերքին ինչ ասի: Կատակները լեզվի ծերին եյին: Ծլկվեց դեպի հեռուն, հասավ անտառը, տեսավ յեզրում կանգնած յուրայիններին ու ձեռքով արավ.

— Հե-հեյ, ձեզ հետ եմ:

Հեռվից ու անտառից լավեց արձագանք: Քսան գույգ շրթունքներ ժպտով բացվեցին: Քսան բերանի մեջ արևն ընկավ ու ատամները փայլեցրեց: Պարամոնի բարեկամ զինանկարիչ Յարկովն սպառնաց.

— Մոռ-սո...

Չրույցի թունդ ժամանակն եր: Պարամոնը գլխով բարևեց բոլորին, նստեց գորշագույն տաք թփերի վրա ու աչքերը դեպի խոսողը հռեց:

V

Սերաֆիման շեմքի վրա Աննուշկայի թևից բռնեց.

— Ախր յես բեզ եմ սպասում, անհանգիստ եմ: Մայրս ինձ ուղարկեց քրոջս մոտ գիշերելու: Իսկույն բոլորը կհարմարեցնեմ:

Կողպեքը վերցրեց, լուսամուտը բաց արեց ու դուրս գնաց: Նայեց փողոց, մի քիչ կանգնեց ու կողպեքն սղերի մեջ հազցնելով — դուռը շրջրթկացրեց. կրկին յետ նայեց ու ծիծաղելով պատուհանից մտավ տուն:

— Հիմի մեզ մոտ վոչ վոք չի մտնի:

— Սուս ու փուս պիտի լինենք, հա:

— Ինչո՞ւ. դատարկ բան ե, թե վոր մեկը գալու լինի, լուսամուտից կասենք, վոր քնել ենք, իսկ մայրիկը դուռը փակել, բանալին հետը տարել ե: Դեհ, շուտ անենք:

Լուսամուտների վարագույրները քաշեցին, վերմակը փռեցին հատակին, Պարամոնի պնած սատինը նրա վրա բացեցին ու չոքեցին: Չափեցին, ձևեցին ու յեզրերը ծալեցին: Կամացուկ փափսոււմ ելին, թե դրոշակի վրա ինչ խորհրդանշան կարել:

Լարված լսողությամբ ու հապճեպ ամեն ինչ դիտեցին, բուզմենտներն ու ասեղները շող-

շողացրին, մկրաւը շրթկացրին և ուրախությունից կամացուկ յերգեցին:

VI

Շաբաթվա կիսին Պարամոնը գնաց մոզելի արհեստանոց և հավաքեց իրենց տղերքի շինած ու ապակե թղթով կոկոժ փայտերը: Յետ-յետ գալով հասավ մեքենագործարանը ու իր դագճյահի դեմացի լուսամուտի փեղկը փակեց: Նըրա ճամպին սպասող Յարկովը փայտերը թաքուն պահեց պատի մոտ, գլանների տակ, ծայրերը ծածկեց վուշի թելերով ու գնաց կաթսայանոցի յետևը:

Այնտեղ, կանաչագարդ տարածության մեջ, ճաշին բնեցին, պատկերախաղ (շաշկի) խաղացին, կտրդացին ու վիճեցին: Յանկապատի մոտ կանգնած եր յերաժշտական գործիքներ շինող բարձրահասակ նիհար վարպետը: Նրանից դենը, գլուխ գլխի տված, պառկած ելին մոտ յերեսուն մարդ: Գլուխների արանքում տաճկի պես ծալապատիկ նստած եր պիտերցի ճառախոսն ու եջերի վրա մատներին հետքերը դրոշմելով, բարձրաձայն գիրք եր կարդում:

Կապույտ յերկնակամարի միջից արտուտի յերգն եր տեղում դաշտի վրա, նրա դայլայլոցը գալիս ցանկապատին եր հասնում ու այնտեղից մարդկանց:

Պարամոնն ու Յարկովը թեև այդ գրքույկն առաջուց կարդացել էյին, բայց ելի լսում էյին... Խոսքերը հնչեց ու ջերմորեն միախառնվում էյին: Պարամոնի կուրծքն ուռչում էր: Ուժի շատությունից մկանները շարժվում էյին և աչքերն ուրախ ուրախ կկոցում էր՝

Թե գործը լավ է գնում:

VII

Յերեկոյան Պարամոնն ամենից շուտ գնաց գործարանից: Նա տանն արագ հագնվեց, մարագի գերանի մեջ փորած ծակից վերցրեց կապոցը և բացառիկ վոսկեգուռն ու կապույտ փողոցով գնաց դեպի «շաքարի դժոխքը» (այդպես էր նա անվանում կանֆետի գործարանը):

Չանգը տալու ժամանակ հասավ ու գնաց Աննուշկայի հետ: Ճանապարհին նա շարունակ անտառի մոտ լինելիք ժողովի մասին էր ակնարկում ու հիշեցնում Աննուշկային, վոր ձեռքերը չձալի ու հետ չմնա:

— Բա յես հետ եմ մնում, — գուսպ բարկությամբ հարցրեց Աննուշկան — թե յես մեղավոր եմ, վոր դուք մեզանից ջուրվում էր: Դեհ, կնանիքն ուր... Վախկոտներ...

— Լավ, թող, եղպես կարծողներ ել կան: Բայց յես մի քիչ ուրիշ կերպ եմ նայում...

Իսկ դու մեզ ուշադրություն մի դարձնի: Դատարկ բան է: Գործ արա:

Աննուշկան վոտից մինչև գլուխ նայում էր Պարամոնին ու ծաղկի պես փթթում: Եսպես մարդի հետ յերբեք յետ չես մնա, չես կորչի: Բայց այդ մասին Աննուշկան խոսք անգամ ասել դժվարանում էր -- կլսեր, հոնքերը կըկտեր, ձեռքը թափ կտար, սեղանին կխփեր ու կասեր:

— Այ հենց եղպես ել կարծում էյի, սիրահարության հոտ է փչում:

Ու նա լսում էր: Նրան թողեց դարպասի մոտ՝ նստարանի վրա նստած՝ հեռացավ, ապա կապոցը ձեռքին դուրս վազեց: Պարամոնը կապոցը դրեց բաձկոնի տակ, իսկ փայտերը տվեց Աննուշկային:

— Առ, եզուց ձեզ մոտ ընկերուհիներիդ հետ ծածանիր: Թեև դուք կաշաղակներ եք, բայց ձեզ համար ել է տոն... Դեհ ո՞վ գիտի, եզուց կարող է մի բան պատահել: համա դրուստն ասած՝ դու լավ մարդ ես... Թող մի ձեռքդ ել է սեղմեմ:

Աննուշկան աջ ձեռքը մեկնեց, իսկ ձախով հենվեց նրա ուսին: Աջ ձեռքի մատները ճթճթացին, ասես ուռնելիքի մեջ լինելին ու նա նստեց.

— Ո՛հ...

— Յազնաց: Վոչինչ: Դու հո տեսա՞ր թե ձեռքդ վոնց սեղմեցին: Մնաս բարով: Ու գնաց: Աննուշկան աղջամուղջն զգաց այն ժամանակ միայն, յերբ նրան իրկվա ցուրտը պատեց:

VIII

Յեզ լուսաբացին Պարամոնի բլուզը փողոցում կապտին եր տալիս: Մտատանջությունից նա ատամներն եր կրճտացնում ու ճիգ թափում՝ հուզմունքը խեղդելու, բայց չեր կարողանում: Յեզ այդ պատճառով ել այդպես վաղ եր վերկացել. մեկը կարող ե մոռանալ թե՛ այսոր վնճ արհեստանոցը գնա, մյուսը քնով կընկնի, յերբորդին չեմ զգուշացրել: Դռնե-դուռ եր ընկել, լուսամուտներն եր բախում ու քնաթաթախ մարդկանց շնչացնելով ինձ վորոնում: Վերջինը վորի մոտ պիտի գնար, Յարկոյն եր:

Նրա դուռը բախեց, միքիչ սպասեց ու հակառակ սովորության՝ նրան թեանցուկ արեց.

— Դե՛հ, գնաք ախպեր ջան... Դիտվորը հո չէս մոռացել: Լսի՛ր ինչ եմ ասում... Միառժամանակ գործարանում դու վոչ մի բանի չխառնվես... Իսկ յեթե ինձ մի բան պատահի, դու քեզ չկորցնես, հա՛:

— Լավ, գիտեմ:

Նրանց զրույցն ել ավելի խորացրեց հուզ-

մունքը: Առավոտը յերկուսին ել արտասովոր եր թվում: Շլացբառումի մոտ Յարկովն ասաց.

— Բայց գիտե՛ս Պարամոն, հենց վոր մերոնք հաղթեցին՝ յես իմ ազգանունը սատանի բաժին կանեմ:

— Սզգանձնա՛ր:

— Հա՛ ելի, պապս գյուղացի յեր, հայրս փականագործ, հորեղբայրս ձուլող, համա ազգանունըս Յարկով... Ճորտ եր... Կթողնեն վոր, զրոյը տանի նրանց:

— Ե՛գ կանացի ծրտի-պրտի բաների թարկը տո՛ւր, անտարբեր միջամտեց Պարամոնը— երպես բաներ մոտածելու սրը չի:

Գործարանի ղիմացի խանութի աստիճանների վրա նստեցին ու հայացքենբը գցեցին դեպի ճանապարհը: Շչակը սուկելուց հետո նրանց մոտ սկսեցին հավաքվել նաև ուրիշները: Խոսում, ծիծաղում ու նայում ելին քաղաքի կողմը:

— Գալիս ե, — շնչաց Պարամոնը:

— Ո՛ւր ե:

— Հրեն՝ կեպկով...

Գալիս եր նա, վորը խոսում եր անտառի յեզրին: Նա հազին ուներ կապույտ բլուզ, յերկարաճիտ կոշիկներ ու կեպկա: Խանութին մոտենալով աչքով արեց, բոլորը վեր կացան, շրջապա-

տեցին նրան ու անցկացրին զով զբասենյակի միջով:

—Հնա, սառել ե... Դեհ, գնացեք արհեստանոցներում իմացեք:

IX

Լսվեց շչակի յերրորդ սուլոցը: Փոկերը քրչփչացին, փոկանիվները զնգզնգացին ու մեքենաները չլիչլիկացին... Ժանիքների տակից պղինձը ցայտեց, սև ձյունի պես թշի փաթիլները թափվեցին, խզզացող ռանդանների տակ ընկած յերկաթից տաշեղները դուրս թռան, խոր դղրդոյնի մեջ յերկար խողովակը շարժվեց ու փայլեց:

Դադգյահից Պարամոնը տեսնում էր, թե աշխատանքի առաջ գլուխներն ինչպես ելին խոնարհվում: Ու յերբ արհեստանոցում բոլոր ձայները կարգի ընկան, նրանց ազմուկից դադգյահներէ միջից նրանց արձագանքեց բարձրաձայն, անզուսպ մի սուլոց ու զանազան ծայրերից՝ միանգամից լսվեցին աղաղակներ:

—Թող: Կանգնեցրո՛ւ:

Պարամոնը գլանների տակից դուրս բաշեց փայտն ու դադգյահների յերկարությամբ ընկավ աշխատող բանվորների մեջ: Գոռում էր, շարժիչների շղթաները քաշում ու բանվորներին շքշքնջում:

—Ստոյերոսինա, եսոր Մայիսի մեկն է, — ու հայհոյում էր:

Բլուզավորները յեռում ելին դռան առաջ: Մի քանիսը շուրջանակի մտիկ էլին աալիս: Մի մասը թափվեց հարևան արհեստանոցները ու այնտեղ հնչեցին ազմկալից կանչեր:

—Թողեք, ընկերներ:

—Դուրս եկեք բակ:

—Դեպի մեքենագործարան: Յուլյցի համար: Բայց կաթսագործարանում կաթսաները հրահա մուրճերի տակ ծեծվելուց ու վշշալուց չեյին դադարում: Դարբնոցի մոտ, մուրճերի տակ, գետինն առաջվա պես տնքում էր: Աղաղակներն ու հուզումները լարերի միջոցով արհեստանոցներից զբասենյակ, զբասենյակից քաղաք էլին հասնում:

Պահապաններն ու ցուցակագրողները միմյանց նայելիս դեմքերը փայլում էին: Պարզվեց, վոր մեքենագործարանը մենակ է: Բլուզավորը լարվեց, բռնկվեց, դրոշակի կոթով թխթխկացրեց ու ահա ջարդված հետ կրգա դեպի դադգյահ... Յերեսը կարծես կավիճ քսած լիներ: Ու հարևան արհեստանոցների կողմից յերևացին մոռացված և կանչելուց խռպոտածները:

—Արհեստանոց մտեք:

Դարպասից դեռ վտանաձայները չէր կտորվել, վոր հնչեց:

1001
8824
424



— Բոլոր անցքերը փակեցեք, վոչ վոքի չըթողնեք: Յեզ նույն ըուպեյին ծայրի հղկող դագոգյահի սալի վրա, ութ հարյուր մարդու աչքերի առջև կարմիրը շողշողաց: Կարմրի վրա բռնկվեց Աննուշկի ու Սերաֆիմայի ասեղնագործած արևը, վորից ցայտեցին՝ տոնի փոթորկի ու հեռավոր գաղափարների խոսքերը:

Կարմիրը բռնել էյին Պարամոնն ու պիտերցի ճառախոսը, — Պարամոնը փայտից, վոր վերցրել են մոզելի արհեստանոցից, իսկ ճառախոսը — վերի անկյունից: Տասնյակ ձեռքեր այնտեղ բարձրացրին անտառի յեզրին խոսողին: Նա ուղղվեց, վերցրեց կեպկան ու մատնացույց արեց կարմիրը:

— Ահա մեր դրոշակը, վոր առաջին անգամ է մեզ վրա ծածանվում: Նա ուր է կանչում...

Բանվորուհիների ձեռքով ասեղնագործված արևից ցայտող խոսքերը կենդանացան, պատերը հեռացան և դաշտերի, լեռների ու ձորերի մյուս կողմից կապույտ բլուզավորների վողջ ախարհը թափվեց մեքենագործարանի ապակե կամարների տակ:

X

Կողակներն ու զինվորները հերթով ներս մտան: Կարմիր յեզրերով գլխարկավորների մեջ,

դիրեկտորն եր իր գլխարկով բայում ու շապում դեպի մեքենագործարան:

Վոստիկանի ու ծառայի առաջ դռնակը հեշտությամբ բացվեց: Մանողները մեքենաները սովորական՝ լի որի պես տեսան — փոկերը բջջում էյին, անկյունում տրանսմիսի գլանակները դղբուգում, ժանիքների տակ պղինձ եր ճրթճրթում, սև ձյունի փաթիլներով թուջն եր թափվում: Միայն աշխատանքի առաջ խոնարհած դեմքերն էյին, վոր խեթ-խեթ փայլում էյին հոնքերի տակից: Դիրեկտորն ու յեզրը գունավոր գլխարկավոր մարդիկ միմյանց նայեցին ու շրթունքները ծուռեցին:

— Դատարկ բան է, սուտ շփոթ:

Նիզակները չէյին կարող ծակել, զնգակներն ու մտրակները չէյին կարող շաչել: Կապույտ բլուզավորները դրոշակները փաթաթել էյին մարմինների վրա: Նրանց սրտերը բաբախում էյին:

Նրանք ձգտում էյին դեպի բանվորուհիների ասեղնագործած արևը ու դեպի կոթի, դեպի հեռուն սլացող կանչերը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0316360

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 105բ.

Պատ. 4809

Տիր. 3000